

(Փրպ. 227): Եւ կոչնատէրը կը պատասխանէր. «Բարի եկիր, սիրելի բարեկամ», կամ յոգնակի ձեւով՝ եթէ եկաւորք աւելի էին (Փաւս. 101): Համոզուած եմ՝ թէ ողջունիս կը յաջորդէր գրկախառն համբոյսը, որ նոյնպէս սովորական էր ամէն հանդիպմանց, եւ ճիշդ այդ ձեւով, Հայոց (Փրպ. 384, 540. Կիր. 237), Պարսից (Փրպ. 504), Հրէից¹, Երուսաղեմացւոց (Կաղ. 72) եւ ուրիշ արեւելեայց, եւ որ Ասիայէն անցած էր ի Յունաստան եւ ի Հռովմալ (Դար. Դ, 1059):

Հաւանական է՝ թէ հրաւիրեալը դեռ ճաշարան չմտած՝ կը հաւաքուէին ուրիշ սրահի մը մէջ, սպասելով բոլոր կոչնականաց գալստեան: Այսպէս վասակ արքունիքն երթալուն՝ «եհաս եւ նստաւ (նախ) ի ներքին դահլիճսն՝ որ էր հրապարակ մեծամեծացն», այս ինքն ժողովատեղի, եւ ուր իրեն պէս կը սպասէին «ամենայն մեծամեծքն» (Եղիշ. 118): Ասոնք իրարու հանդիպելուն՝ հարկաւ զիրար եւս կ'ողջունէին մի եւ նոյն ձեւով:

Իսկ այն պահուն՝ ուր տաճարը պիտի մտնէին, տեղի կ'ունենար այս քաղաքավարական ձեւակերպութիւնը: Կոչնատէրն

1. Յուդա ողջունեց զՅիսուս և իսկոյն «համբուրեաց ընդ նմա» (Մտթ. 19, 49):